

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/4 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
13	<p>Կոշիկը արտադրվում է սև գույնի բնական կաշվից, մշակված անջրանցիկ ծածկույթով: Կազմված է, կոշկերեսի երեսամասից, հետնամասի արտաքին գոտուց, ճոքերից, միջատակից և ներբանից: Երեսամասի և հետնամասի արտաքին գոտու կաշվի հաստությունը` 1.8-2.0 մմ, իսկ ճոքերի կաշվի հաստությունը` 1.6-1.8 մմ: Ներսի ծածկույթը շնչող, ծակոտկեն գործվածքից և բիազից /100% բամբակ/: Կոշկաքիթը և կրնկամասը կոշտ տերմոպլաստիկ նյութից: Ճոքերի բարձրությունը 110մմ, վերևի մասը փափուկ կանթ: Ճոքերի վրա պետք է լինի 5 զույգ մետաղյա օղագույցներ, կապումը կոշկաքուղերով (ապրի): Լեզվակը /փակ փական/ բաղկացած է բնական և արհեստական կաշվից: Երեսամասը, ճոքերը, ետնամասի արտաքին գոտին իրար հետ ամուր կարակցված են: Ներբանը բաղկացած է 2 մասից /ներքին և արտաքին նրբաններից/: Ներքին ներբանը պատրաստված է 3մմ հաստությամբ ամուր ռետինից , որը երեսամասի և միջատակի հետ կարակցվում է սոսնձման և/կամ կարման եղանակով: Արտաքին ներբանը պատրաստված է մաշակայուն, ջերմակայուն, ցրտադիմացկուն ռետինից, որի երկայնական կտրվածքի հաստությունը պետք է լինի ոչ պակաս 6մմ: Ներքին և արտաքին նրբանները իրար հետ կարակցվում են սոսնձման եղանակով բարձր ճնշման տակ: Արտաքին տեսքը համաձայնեցվում է Գնորդի հետ: Փաթեթավորումը սովորաբար արկղերով, 1 արկղի մեջ 20-25 զույգ, արկղերը` պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: Կոշիկի չափերի քանակները տրամադրվում է Գնորդի կողմից: Արտադրվում է 38-47 չափերի:</p>

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ԲԿԵ-ԵԱՃԱՊՁԲ-22/4 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
13	